



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

N 744-Ա/Ք

25.08.2015թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ՝ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՎ
ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՄԵՆԱՄՅԱ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ կետի դ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման Հավելված N 3-ի 46-րդ կետի 4-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի N 2175-Ն որոշման Հավելված N 2-ի 26-րդ կետի թ) ենթակետով՝

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ու արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների ամենամյա տարեկան նախահաշիվների կազմման և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից դրանց հաստատման գործընթացը կանոնակարգելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

- 1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության հանրակրթական հիմնական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատության /այսուհետ՝ հաստատություն/ ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 1-ի,

- 2) ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշվի լրացման կարգը՝ համաձայն Հավելված N 2-ի,
 - 3) պետական ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող հանրակրթական ուսումնական հաստատության շահույթի բաշխման ուղղությունների մասին տեղեկանքի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 3-ի:
2. Հաստատությունների տնօրեններին՝ նախահաշիվները ներկայացնել հաստատման համաձայն սույն հրամանով հաստատված օրինակելի ձևի:
 3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարին:



ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի
ղեկավար _____

ա. ազգանուն

ստորագրություն

Կ. Տ.

§ 1 _____ 20 թ.

Միջին տարեկան
երեխաների թիվը _____

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

‘<< _____ >> կազմակերպության
20 թ. ի եկամուտների և ծախսերի

Հ/Հ	<u>Հոդվածի անվանումը</u>	Գումար հազ.դրամ
I	Դրամական միջոցների ազատ մնացորդը տարեսկզբին	
II	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝ այդ թվում	
1	Ընդհանուր հանրակրթական ուսուցում (ծրագրի անվանումը)	
2		
3		
...	Դրամաշնորհ կամ նվիրատվություն..նպատակը և տրամադրողի անվանումը’..	
...		
...		
...	Վարձավճարներից	
...	Այլ ձեռնարկատիրական գործունեությունից	
...	Այլ եկամուտներ	
III	Ծ Ա Խ Ս Ե Ր՝ այդ թվում	
	Ընթացիկ ծախսեր՝ այդ թվում	
1	Ընդամենը < > ծրագրի գծով՝ այդ թվում	
1.1	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	
1.2	Էլեկտրաէներգիայի ծախսեր	
1.3	Ջեռուցման ծախսեր /փակագծում նշել ջեռուցման տեսակը/*	
1.4	Ջրմուղ կոյուղուց օգտվելու վարձավճար	
1.5	Աղբահանության ծառայություն վարձավճար	
1.6	Ֆիքսված հեռախոսակապի ծառայություն	
1.7	Ինտերնետի և այլ տեսակի կապի վարձավճարներ	
1.8	Կոմունալ համակարգերի սպասարկման, անվտանգության ծառայություններ և նման այլ վճարներ	
1.9	Տնտեսական ապրանքների և նյութերի ձեռքբերման ծախսեր	
1.10	Գրասենյակային ապրանքների ձեռքբերման ծախսեր	

1.11	Այլ արագամաշ առարկաների ձեռքբերման ծախսեր	
1.12	Մննդի ձեռքբերման ծախսեր	
1.13	Տրանսպորտային ծախսեր	
1.14	Գործուղման ծախսեր	
1.15	Ընթացիկ վերանորոգման ծախսեր	
1.16	Փափուկ գույքի և հանդերձանքի ձեռքբերման ծախսեր	
1.17	Այլ ծախսեր ../նշել ծախսի անվանումը/	
2	Ընդամենը < > ծրագրի գծով ` այդ թվում	
2.1	Կապիտալ բնույթի ծախսեր, այդ թվում	0
2.2	Կապիտալ վերանորոգման ծախսեր	
2.3	Հիմնական միջոցների ձեռքբերում	
2.4	Այլ կապիտալ բնույթի ծախսեր ../նշել ծախսի անվանումը	
3	Ընդամենը < > ծրագրի գծով ` այդ թվում	0
3.1		
3.2		
3.3		
3.4		
...	Ընդամենը < > դրամաշնորհի կամ նվիրատվության գծով ` այդ թվում	0
IV	Դրամական միջոցների ազատ մնացորդը տարեվերջին	

Խորհրդի նախագահ

կնիք

Տնօրեն

Գլխավոր հաշվապահ

լիազոր մարմնին ներկայացման ամսաթիվ § 1 _____ 20 թ.

ԱՄԵՆԱՄՅԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳ

1. Նախահաշվում միջին տարեկան երեխաների թիվը նշվում է այն թիվը, որն ամրագրված է ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ /այսուհետ՝ նախարարություն/ կնքվող պայմանագրում կամ համաձայնագրում:
2. <<Եկամուտներ>> մասում եկամտի բոլոր աղբյուրները նշվում են առանձին-առանձին, ընդ որում ՀՀ պետական բյուջեից ստացվող եկամուտները նշվում են ըստ ծրագրերի:
3. Եթե որևէ ծրագրով նախատեսվում է ընթացիկ և կապիտալ ծախսեր, ապա կապիտալ ծախսերի մասը ներկայացվում է տվյալ ծրագրի ընթացիկ ծախսերի բաշխումից հետո: Եթե տվյալ եկամուտը նախատեսում է միայն ընթացիկ կամ միայն կապիտալ ծախսեր, ապա ծախսերի բաժնում այն նշվում է տվյալ ծրագրի անվան տակ:
4. Եթե հաստատությունը որևէ առանձին ծրագրով /օրինակ տարակարգ ստացած ուսուցիչների հավելավճարներ/ ստանում է աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճարում, ապա այն առանձին նշվում է որպես ծախս:
5. <<Կոմունալ համակարգերի սպասարկման, անվտանգության ծառայություններ և նման այլ վճարներ>> տողում նշվում են այն ծախսերը, որոնք կատարվում են հաստատության և այլ իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա /հրդեհանվտանգություն, կենտրոնացված ջեռուցման համակարգերի սպասարկում և այլն/:
6. Հաստատությունը կարող է նախահաշվում ավելացնել այնպիսի ծախսային հոդվածներ, որոնք նախահաշվի օրինակելի ձևում բացակայում են:
7. Հաստատությունը նախարարության հետ ֆինանսավորման պայմանագիրը և տարեվերջին համաձայնագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տարեկան նախահաշիվը՝ հաստատման երկու օրինակով: Նախարարությունը 10 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ֆինանսական տարվա սկզբում ոչ ուշ քան փետրվարի 28-ը, ստուգում և հաստատում է նախահաշիվը և մեկ օրինակը վերադարձնում հաստատությանը:

8. Եթե տարվա ընթացքում անհրաժեշտություն է առաջանում նախահաշվում կատարելու այնպիսի փոփոխություն, որի մեծությունը գերազանցում է նախահաշվով սահմանված եկամուտների 5 տոկոսը, ապա հաստատությունը ներկայացնում է փոփոխված նախահաշիվը, կից հիմնավորումներով, նախարարության հաստատմանը, որը հաստատում կամ մերժում է այն 5 աշխատանքային օրվա ընթացքում:
9. Այն հաստատությունները, որոնց նախահաշիվները, իրենց կազմակերպարավական կարգավիճակից ելնելով, չեն հաստատվում նախարարության կողմից, ներկայացնում են իրենց կողմից հաստատված նախահաշիվը նախարարության հետ պայմանագրի կամ համաձայնագրի կնքումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն հրամանով հաստատված օրինակելի ձևին համապատասխան: Տարվա ընթացքում նախահաշվով սահմանված եկամուտների 5 տոկոսը գերազանցող փոփոխություն իրականացնելու դեպքում, փոփոխված և հաստատված նախահաշիվը ներկայացվում է նախարարություն փոփոխությունը կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< _____ >> պետական ոչ առևտրային
 կազմակերպության 20 թ.-ի գործունեության արդյունքում ստացված
 շահույթի բաշխման ուղղությունների մասին

	ՖՈՆԴԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	գումարը, հազ. դրամ
	Հաշվետու տարվա շահույթը, որից՝	
1	Պահուստային ֆոնդ	
2	Կուտակման ֆոնդ	
3	Սպառման ֆոնդ, այդ թվում	
ա	աշխատողների նյութական խրախուսման ֆոնդ	
բ	դրամական օգնության ֆոնդ	
գ	բարեգործական ֆոնդ	
դ	այլ	
	ԸՆԴԱՄԵՆԸ	

ՊՈԱԿ -ի խորհրդի նախագահ

ա. ազգանուն

ստորագրություն

ՊՈԱԿ - ի տնօրեն

ա. ազգանուն

ստորագրություն կնիք

ՊՈԱԿ - ի հաշվապահ

ա. ազգանուն

ստորագրություն

Լիազորված պետական մարմին ներկայացման ամսաթիվ

§ _____ 20 Յ.